

ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԵԿԻՈՂ 1888 ԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակի Թիֆլիսում, նոյն գիրքով և նոյն պրոպագանդով: Մեր կը ստանանք սեփական
ՀԱՅՈՒՄՆԵՐԻՆԵՐԻ:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, վեց ամսվանը 6 ռուբլ:
Գրվել «ՄՇԱԿ»-ն կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների մի-
կիւնում, Թամաշիւի տանը):
Կայտարարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ»-ն գրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հաս-
ցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

„ՄՇԱԿ“ ներկայ համարը ունի 6 էրես:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Մէջքիսդէկ եպիսկոպոս Մուրադեանց.— Ներ-
քին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ուսումնասիրութեան մէջ մեր
պարտականութիւնը. Նամակ Ներքին-Արտաքին-
Նամակ Ներքին. Նամակ Ներքին-Արտաքին. Նամակ
Խմբագրին. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ. ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Խաղաղութիւն և պատերազմ. «Kölnische
Zeitung» լրագրի յօդուածը. Արտաքին լուրեր.—
ՀԱՅՈՒՄՆԵՐԻՆԵՐԻ.— ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐԻ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գրականական նը-
կատողութիւններ:

ՄՆԼՔԻՍԵԳԵԿ ԵՊԻՍԿՈՓՈՍ ՄՈՒՐԱԳԵԱՆ

I

„Ի՞նչին ենք մեղադրում օտարներին, երբ
մենք ինքներս մեր անարժան արարքներով

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգում լոյս տեսաւ մի նոր պատկե-
րադարձ հանդէս «Արքայ» անունով, հրատարա-
կութեամբ Ս. Գրիգորիանի:

Ինչպէս «Մշակ» անցեալ համարներից մէկում
արդէն յայտնված էր, այդ հանդէսը առ այժմ
լոյս կը տեսնի տարեկան երկու անգամ, և եթէ
բաժանորդագրութիւնը լաւ գնաց (որը առ այժմ
թոյլ է դնում, այնպէս որ հրատարակողը այդ
հանդէսը ամսօրեայ դարձնելու մասին խօսելն
անգամ աւելորդ է համարում), այն ժամանակ
նա կը դառնայ ամսագիր:

Յանկալի է, որ այդ մտադրութիւնը իրագործ-
վի, որովհետեւ այս րօպէիս մի լաւ ամսագրի կա-
րեւորութիւնը մեր մէջ շատ զգալի է: Ներկայու-
մըս կան խնդիրներ, և շատ կարեւոր խնդիրներ,
որոնք կարօտ են բազմակողմանի ըննութեան,
այս րօպէիս մեր մէջ արժանիւթում են շատ հա-
տարակալան հարցեր, որոնց պէտք է մշակել
շատ մանրադնին կերպով. վերջապէս այսօր մեր
առաջ կանգնել է մի մեծ գործ, այն է մեր երկ-
րի բարեկեցիկ ուսումնասիրութեան համար, որը
մեր պահանջում է մի կողմից ճանապարհ-
ցոյց տալ այդ ուսումնասիրութիւնը կատարելու
համար, իսկ միւս կողմից անխորտակ կարգի բե-
րել ուսումնասիրութեան համար հաւաքած նիւ-
թերը, որոնք հիւսն պէտք է լինեն մեր երկրի
տնտեսական և մտաւոր զարգացման համար:

Այդ բոլորի և դրանց նման շատ ուրիշ խնդիր-
ների համար մեր պարբերական հրատարակու-
թիւնների մէջ վաղուց արդէն զգացվում է մի
ամսագրի կարեւորութիւնը, քանի որ այժմ ուս-
մասնայերը չունեն մի այդպիսի ընդհանուր գրա-
կանական-քաղաքական բովանդակութիւն ունեցող

և մեր մասնութիւններով մեր տունն ենք
քանդում: Ահա այն իրաւացի միտքը որ
յայտնում է Կ. Պոլսի մեր թղթակից Հայ-
կալի, Զմեւանիայի առաջնորդ Մեքիսեդէկ
եպիսկոպոսի բարոյական պատկերը մեզ իր
վերջին թղթակցութեան մէջ նկարագրելով:
„Մշակ“ № 135-ի առաջնորդում
մենք նախադուշակեցինք այն, ինչ որ այ-
ժմ կատարվում է Թիֆլիսում: Բ. Գուռը,
որ մի քանի ամիս առաջ յարգելով Հայոց
եկեղեցու աւանդութիւնները, հրաժարվել
էր Կ. Պոլսի Պեշիկթաշի հայոց գերեզմա-
նոցը խելուց, այժմ տեսնելով որ Զմեւա-
նիայի Հայոց առաջնորդը ինքն ոչնչաց-
նում է Հայոց գերեզմանոցը և նրա վրա
խանութներ է կառուցանում, Բ. Գուռը
այժմ նորից յարուցանում է Պեշիկթաշի
գերեզմանոցի խնդիրը:
Ուրեմն դարձեալ Հայը, և մի և նոյն

ամսագիր: Հէնց այդ տրամադրութեան ներքոյ,
պէտք է խոտովանենք, մենք մի առանձին սի-
րով սկսեցինք թերթել «Արքայը», որի արտաքին
տեսքը շատ զբաւել է: Մենք համբերութեամբ
կարդացինք այդ 12 տպագրական թերթերից բազ-
կացած բաւական հաստ գիրքը, և կարդալուց յե-
տոյ այն եղբայրացիներին եկանք, որ «Արքայը»
խալապէս զանազան յօդուածներով—գլխաւորա-
պէս տեղագրական և կենսագրական բովանդա-
կութեամբ,—մի հաւաքածու է, և չունի այն յատ-
կութիւնը, որը տալիս է իւրաքանչիւր պարբերա-
կան հրատարակութեան ժամանակակից,
թաւմ կերպարանք, որովհետեւ դրա մէջ չը կան
թէ ներքին և թէ արտաքին ընթացիկ հարցերի
վերաբերեալ յօդուածներ, չը կան ընդհանուր-
ութեան կամ տեսութիւններ մեզ բոլորիս
զբաղեցնող հասարակական առօրեայ խնդիրնե-
րի մասին, այնպէս որ մի և նոյն է կը կարգա-
դուր «Արքայը» այժմ, թէ երկու երեք ամիս
յետոյ, ընդհանրապէս ոչինչ տարբերութիւն չի
ունենալ: Մեր առաջ դրած «Արքայ» առաջին
գրքի մէջ կան յօդուածներ, որոնք ինչպէս այժմ
չեն կարդացվում, նոյնպէս և յետոյ էլ չեն կար-
դացվի, որովհետեւ ոչինչ հետաքրքրութիւն չու-
նեն. բայց կան և այնպիսի յօդուածներ, որոնք
այժմ էլ հետաքրքրի են, հետաքրքրի կը լինէին,
եթէ լոյս տեսնէին սրանից մի քանի տարի ա-
ռաջ, և էլի հետաքրքրի կը լինեն, եթէ լոյս տե-
սեն սրանից շատ տարի յետոյ:

Նայենք մի փոքր աւելի մօտիկից հանդէսի բա-
վանդակութեան վրա, որքան այդ թոյլ են տա-
լիս մեր յօդուածի սահմանները:
Մենք մի առանձին սիրով կարդացինք հանդէ-
սի առաջին յօդուածը, որը ընդհանրապէս վերա-
բերում է Թիֆլիս-Հայաստանին, և այդ ոչ թէ
նրա համար, որ յօդուածի մէջ մի առանձին նոր
բան կայ, ոչ, այլ նրա համար, որ յօդուածը
խոտովանում է պաշտպանում է շատ կարեւոր
և մեր հասարակութեանը յայտնի ճշմարտութիւն-
ներ, այն է, թէ Թիֆլիս-Հայաստանը տնտեսա-
կան և կրթական կրիզիսի մէջ է, և թէ, պէտք է

ժամանակ հայ եպիսկոպոսը, այնպիսի մի
եպիսկոպոս, որ համարվում է ուսումնա-
կան մի հոգեւորական, մի մարդ որ գրել է
Հայոց եկեղեցական պատմութիւնը, ուրեմն
մի մարդ որ շատ լաւ պիտի իմանայ թէ
Հայոց եկեղեցու աւանդութեամբ չէ կարե-
լի բանալ արդէն կնքված գերեզմանները
և տեղափոխել մեռելանիւնին, մի հոգեւորա-
կան որ յանդիմանում էր թեկնածու լինել
ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռի,
—այդ մարդը, հաւատարիմ մնալով բուն
արեւելեան, նենգաւոր, խարդախ բնաւորու-
թեանը, միշտ խաղալիք լինելով իր անձ-
նական անգուպ կրքերի և զոհ իր ան-
սահման և անյաղ փառասիրութեան, այդ
մարդը մի յայտնի րօպէիս, երբ իր անձ-
նական շահերը պահանջում են, պատրաստ
է մռանալ ամեն բան և ազգային աւան-
դութիւնները և իր պարտաւորութիւնները
և անգուցիւնը և ապագայ սերունդների
բարոյաստանը, միայն թէ ամեն անգամ
միջոցներով հասնի իր նպատակին, ձեռք
բերի այն փառքը և բարձր դիրքը, որոնց
անկախութիւնը դադար ու հանգիստ չէ
տալիս իր նենգաւոր ոգուն:

Փառասիրութիւնը ինքն ըստ ինքեան մի
շատ յարգելի դրացունք է. միայն զանա-
գանութիւնը նրանում է որ ազնիւ
անհատներ ձգտում են փառասիրութեանը
և հասնում են փառքին բացարձակ և
ազնիւ ճանապարհով երբեք իրանց ձեռք-
բերելու չը գցելով արդարութեան, ճշ-
մարտութեան, խղճի և անգուցիւնը զրո-
շակը, իսկ սո ր մարդիկ ձգտում են նոյն
նպատակին, փառքին հասնելու ստոր,
անազնիւ, դարձիկ միջոցներով խաբէու-
թեամբ, մասնութիւններով և դաւաճա-
նութիւններով:

Այդ վերջին տեսակներին էր պատկա-

հիմնովին ուսումնասիրել այդ երկրի, ա-
ռանց որի ոչինչ չէ կարելի անել, թէ պանդի-
տութիւնը մեծ փառք է սպառնում այդ երկրին,
և թէ վերջապէս Պոլսի մասուրը, երիտասարդու-
թիւնը և գործիչները չեն ուսումնասիրում թիւր-
քայ-Հայաստանը, սրտով չեն զբաղվում թիւրքաց
Հայաստանով, և այդքան տարի դուռում գոչում
բարձրացնելուց յետոյ անգամ չեն ճանաչում
այդ երկիրը:

Ընթերցող հասարակութեանը յայտնի է, որ
այդ բոլորը միանգամայն ճիշդ է: Ուսումնասիրու-
թեան հարցը շատ լայն սահմաններով դնելուց
յետոյ, թիւրքաց-Հայաստանի անտեսական դար-
դացման խնդիրը չօգտակելուց յետոյ, յօդուածագի-
ւնը եղբայրացիութիւնների և առաջարկած միջոցների
մէջ, տարբարաբար, շատ միակողմանի է դառ-
նում, և սխալվում է, կարծելով թէ մի ընկերու-
թիւն հիմնելով և մի ընկերութեան միջոցով դըպ-
րոցներ բանալով կարելի է թիւրքաց հայերին
ապաստել տնտեսական, առևտրական կրիզիսներից,
պանդիտութեան հոսանքից և կրօնական զանա-
զան պրօպագանդաներից: Այդ կարելի է ասել
գոցել: Երբ այդ եղբայրացիութիւնը շատ հեշտ է
դուրս բերած, կարճ է, բայց, տարբարաբար
ազդու չէ... Այդ բոլորը գոցել ճիշդ լինել, և
թէ ճիշդ լինել յօդուածագրի այն կարծիքը, թէ
«առանց էջմիաշնի մենք հայի դուրսութեան ան-
գամ չը դիտենք»:

Հետաքրքրութեամբ է կարդացվում Դիակալի
«Ազգային» մի մեծ գործաւոր վերնագրով յօդուա-
ծը, որը վերին աստիճանի ոգեւորութեամբ է
խօսում թորեն Նար-Բէշի դործունեութեան մա-
սին, նկարագրելով այն բոլոր կրօնական և աղ-
ղային նշանաւոր շարժումներից մի քանիսը, ո-
րոնք տեղի ունեցան զխաւորապէս Պոլսում,
վախճանական թաւաճաններից սկսած: Բաւական
հետաքրքրի է և «Զէյթունի» անցեալից և ներ-
կայից վերնագրի կրող յօդուածը, որը մի
աւանդիկ զննելով զԵյթունցիների վրա, պատմում է
1862, 1878, 1879 և վերջապէս 1884 թ.ական-
ներում անտեղ տեղի ունեցած ապստամբական

նում միշտ և Գարեգին Մուրադեան, այժ-
մեան Մեքիսեդէկ եպիսկոպոսը:

II
Շատերը յիշում են Թիֆլիսում, յիսունե-
րորդ թականներում դէմքով անհամակրելի,
աղքատ, ողորմելի մի ուսուցչին, որը իր
բնաւորութեամբ այն ժամանակն էլ ներկա-
յացնում էր նախանձի, անսահման կրքի
տրպար, իր ստոր վիճակի և նիւթապէս
ճնշված դրութեան պատճառով՝ մարմնա-
ցած նենգութեան պատկերը: Այդ մարդը
աշխատակցելով այն ժամանակ «Կոռնիկ»
ամսագրին, ուրիշ միջոց չէր գտնում իր
կրքերին բաւականացնելու, ինչպէս այդ ա-
նում են առհասարակ ստոր և նախանձոտ
բնաւորութիւնները, որոնք չեն կարող հաս-
նել ուրիշ բարոյական բարձրութեանը,
եթէ ոչ յիշեալ ամսագրի էջերում, ցեխի
կոյտեր գցելով Նապարեանցի երեսին և
խաւարամիտ յօդուածներ գրելով «Հիւսի-
սափայլ» դէմ:

Այդ փառասիրութիւնը տարաւ նրան
ուղղակի դէպի հոգեւորական կոչումը: Բայց
աղքատ դառնալով եպիսկոպոս դառնալով
նա միայն նախկին թշուառ:

«Արքայ» Արարատեան «լրագրի երկ-
տասարդ խմբագիրը Մեքիսեդէկի դէմ
մի յօդուած է տպում:—Մեքիսեդէկը ան-
միջապէս մատնում է նրան թիւրքաց ներ-
քին գործերի նախարարին և երկտասարդ
խմբագրին բանտարկում են: Բերլինի կօն-
գրէսի ժամանակ հանգուցեալ Ներսէս
Վարժապետեան ուղարկում է Բերլին, որ-
պէս թիւրքաց Հայաստանի շահերի ներկա-
յացուցիչներին՝ խրմեանին և Նար-Բէշին,
իսկ փառասեր Մեքիսեդէկին չէ ուղար-
կում:—Ահա Մեքիսեդէկը այն րօպէից
ուխտում է ասելութիւն և վրէժ ոչ թէ
միայն իրան Ներսէսի անձնաւորութեան

շարժումները, որոնցով դէյթոնցիները ուղում
էին պաշտպանել իրանց անկախութեանը Թիւր-
քայի դէմ, այն դէյթոնցիները, որոնք այժմ
սարսափելի հրդեհի վշտանքի տակ ճնշվում են,
և որոնց մասին մի ամբողջացի միաբնակար ա-
սում է հետեւալը. «Երանց մէջ ամէլ ու կազմ-
վել է մի տեսակ բնաւորութիւն, որը շատ կեն-
դանի կերպով միջ յիշեցնում է Վիլհելմ Տէլլ, և
Ռուպին Հուսթը, և երբ գծուծ ստրկութիւնը ընդ-
հանուր կերպարանք է առած երկրի մէջ, իրոտ
կազդուրիչ է տեսնել այս լեռնականների աղատ,
անկախ և սէր դէմքն ու դիրքը»:

Ընթերցող հասարակութեան համար ուշադրու-
թեան արժանի կարող է լինել և «Տաճկաստան և
նոյնա սահմանագրութիւն» յօդուածը, որը պա-
րունակում է այդ սահմանագրութեան սկզբնաւո-
րութեան համառօտ պատմութիւնը և նրա էա-
կան կէտերը:

Հանդիսի մէջ տպված է և պ. Գր. Նիկողոսեանի
մի ճառը «Հայաստան» վերնագրով, որը նա խօսել
է Պեշիկթաշի օրիորդաց դպրոցի մի հանդիսում,
և որը, որքան մենք յիշում ենք, տպված է եղել
«Մասիս» շաբաթաթերթի մէջ: Այդ յօդուածի մէջ
գովաբանվում է հայ կնոջ հոգեկան արիւթիւնը,
աւանդապատմութիւնը և իղէալականութեան հա-
սած առաքնութիւնը և բարոյականութիւնը: Թէ
որքան ճիշտ է այդ բոլորը որոշել չենք կարող,
գիտենք միայն որ հայ կինը արեւելի կին է, որի
մասին, նոյն հանդիսի մի ուրիշ յօդուածում կար-
դում ենք հետեւալը. «Արեւելի կինը ընդհանրա-
պէս աւելի անբարոյական է, քան եւրոպացին»:

Այս առաջին դրքի մէջ զետեղված են և Պոլսի
Յարութիւն պատրիարքը, խորն Նար-Բէշի, Լօմ-
գօնի պարսից զեհպան Միլլա Միլլա խմբի
համառօտ կենսագրութիւնները, նրանց պատկեր-
ների հետ միասին: Ինչպէս այդ, նոյնպէս և հա-
նդիսի մէջ զետեղված մի քանի քաղաքները նկար-
ները յաջորդած կարելի է համարել: Բայց պէտք
է նկատել, որ այդ պատկերներից և կենսագրու-
թիւններից մի քանիսը չունեն ժամանակակից
նշանակութիւն: Աւելի հետաքրքրի կը լինէր ի

կարելի ուրախութեամբ չը նկատել, որ այդ մի բացառիկ երևոյթ է Արապիայի դպրոցներէ համար, որոնք, ինչպէս յայտնի է, տարիներէ ընթացքում անպակաս են եղել կուրսերը, երկպառակութիւնները և անվերջանալի տրտուհիները: Ներկայումս ուսուցչական խմբի մէջ ընդհանրապէս համերաշխութիւն է նկատուում. եթէ երբեմն մըն-երբեմն վերելի աղմուկներ են պատահում, այդ էլ չնորհի մի քանի հողաբարձներէ, որոնք միշտ սովոր են եղել տեսնել վարժապետներէ կողմից անբարեկամ հնազանդութիւն, և երբ հակառակն են նկատում, սկսում են խառնակութիւններ գցել: Պէտք է սպասել, որ տեսչի, ուսուցչիներէ և մի քանի հողաբարձներէ համերաշխ գործունէութիւնը կը յաղթի և այդպիսի տղեղ երևոյթներնս:

Ոմանք դիմում են մեզ հարցնելով թէ Երբ պիտի վերջացնենք Գրիգոր Արծրունու «Մի տարի Շփեցարիայում» վերնագրով յիշողութիւններէ «Մշակի» մէջ տպագրելը: Ներկայ 1887 թւին մենք թէ ներթերի շատութեան և թէ այլ բուն անձնական հանգամանքներ պատճառով չը կարողացանք վերջացնել յիշեալ յօդուածներէ տպագրելը, բայց եկող 1888 թւին անպատճառ կը վերջացնենք «Մշակի» մէջ այդ յօդուածներէ տպագրելը և այնուհետև յոյս ունենք առանձին գրքով էլ հրատարակել այդ յիշողութիւնները:

ՆՈՐ-ԲԱՅԱՋԱՏԻՑ մեզ գրում են: «Նոր-Բայաջատում 4—10 տարեկան երկու սեռի երեխաների մէջ այժմ սաստիկ տարածված է բկացաւը, որ կարճ միջոցում շատ դոնոր տարաւ և շարունակում է տանել: Անցեալ տարի պրովիդոր պ. Շաբէլիկի այստեղ մի գիւղական դեղատուն բաց արեւելի, ստանալով քաղաքապետական գումարից 500 ռուբլի տարեկան օժանդակութիւն, հինգ տարի ժամանակով Բայաջ մէջ նշանակութիւն ունի դեղատունը առանց բժշկի: Գաւառական բժիշկի, Նաչիլի, թէ և բարի և ազնիւ մարդ է և իր այստեղ եղած ժամանակ իր կարողութեան չափ ամենքին հասցնում է կարևոր օգնութիւն, բայց այդ բժիշկին էլ տարվա մեծ մասը քաղաքից բացակայ է լինում: Գաւառի զանազան կողմերում պատահած սպանութիւնները և վիրաւորումները հետազոտելով ու դատաւարանա-բժշկական ակտեր կազմելով, իսկ ամբողջ նոյեմբեր ամսում նա ղեկավար էր գաւառիս երեք մասի նորակոչ զինուորների զննութեամբ: Ուրեմն գաւառական բժիշկը ժամանակ էլ չունի հողաբու քաղաքիս հիւանդների մասին և լաւ արած կը լինէին, եթէ աշխատէինք մի սեփական քաղաքային բժիշկ ունենալու և նրա ուժերը վճարէինք բանկում պահած քաղաքապետական գումարից»:

ՊԵՏԵՐԲՈՐԳԻՑ պ. Նիկողայոս խօսիւմանց, գրելով «Մշակին», մի և նոյն ժամանակ ուղարկել է մեզ դարձեալ 20 ռուբլի, որպէս զի այդ վտղով ուղարկենք «Մշակի» մի տարեկան օրինակ Ղլարի հայոց օրիորդաց դպրոցին. իսկ երկրորդ օրինակը Պետերբուրգի Տեխնոլոգիական ինստիտուտի հայ ուսանողներին:

«Новое Обозрѣніе» լրագիրը լսել է, որ մի նորաւարտ տեխնիկ մտադիր է զալ տարվանից թիֆլիսում հրատարակել հայերէն լիզուով մի ամսագիր:

Մայրաքաղաքի ռուս լրագիրները հաղորդում են, որ մինչև այժմ էլ Ռուսաստանի զանազան կողմերից թէ զեմալուծները և թէ հասարակական վարչութիւնները դիմում են ժողովրդական լուստարութեան միջնատրութեան խնդրելով, որ թոյլատրվի զինադիւնների և պրօգրիմադիւնների համար նախապատրաստական դաստաներ ունենալ, որոնք, ինչպէս յայտնի է, փակվում են մի-նիստրական յայտնի շրջաբերականի զօրութեամբ:

ՇՈՒՇՈՒ գաւառի խանքինդ զիւղի հայոց ծխական ուսումնարանի ուսուցիչը գրում է մեզ: «Այս տարի խանքինդ աւանում բացվեցաւ ծխական հայոց ուսումնարան, որը ժողովրդական կողմից դեռ ևս անապահով գրութեան մէջ լինելով, դժբաղդապէս չենք կարող ստանալ «Մշակ» լրագիրը: Ուստի շատ ուրախալի կը լինել, եթէ կամ ինքն խորագրութիւնը, կամ որ և է այլ անձն նուիրելին մեր ուսումնարանին «Մշակի» մի տարեկան օրինակ»:

Կենդ մեր կողմից ձրիաբար «Մշակի» մի օրինակ խանքինդի դպրոցին:

Մեզ խնդրում են «Մշակի» մի տարեկան օրինակ ձրիաբար ուղարկել Ներքին-Ազգութի դպրոցին: Կուղարկենք:

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են, որ այստեղ ստացված է Նշմանի սինօդից հրաման, որով Կարսի վիճակի յաջորդ Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեան հրաժարվում է իր պաշտօնից և հրաւիրվում է Նշմանի Նրա փոխարէն դեռ ոչ ոք չէ նշանակած:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽԱՂԱՎՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՏԵՐԱՋՄ

Բայաջական անցքերը կողքին իրանց նախկին թարմութիւնը, Ֆրանսիական հանրապետութեան նախագահի ընտրութիւնը և դրա հետ կապված յօդուածները վերջացան, — և հաւ կըրկին, խօսելով զիսկ ամառական լեզուով, քաղաքական հօրիզոնի վրա պատերազմի վտանգներ են երևում: Այս րօպէիս եւրօպական մամուլը և հասարակաց կարծիքը զիստօր առարկան խաղաղութեան և պատերազմի խնդիրն է: Ամենքը և ամեն տեղ հարցնում են. «միթէ յիստիկ պատերազմ կը լինի»: Այդ կասկածը արդէն ազդել է թէ բօրայի, և թէ հասարակաց կարծիքը վրա: Հանրամարտը այնպէս են դասաւորվել, որ նոյն իսկ պետութիւններ յայտնած մտքերը, թէ ամենքն էլ խաղաղութեան կողմն են, կողքնում են իրանց սուղեցութիւնը, քանի որ միւս կողմից համարեա ամեն տեղ զինաւորվում, սպառազինվում և պատերազմական պատրաստութիւններ են տեսնվում, քանի որ այս րօպէիս զիսկ ամառային զիստօր պարագմունքի նիւթը պատերազմի խնդիրն է: Հեռագիրը արդէն լուրեր բերում այն զինուորական խորհուրդներ և ժողովների մասին, որոնք տեղի են ունենում վիճմանում, մասնակցութեամբ առաւորական ամենահայտնաւոր դործիւնների և նախագահութեամբ Ֆրանց-Յովսէփ կայսրի: Գաղտնիք չէ, որ այդ ժողովների պարագմունքը պատերազմի և իսկ զաղուծեալն ինչպէս է: Իսկ միւս կողմից երեք մեծ պետութիւնների զաջնակցութիւնը, ինչպէս իրաւամբ նկատում են եւրօպական շատ լուրագիրներ, ոչ թէ թուլացնում է պատերազմի վտանգը, այլ ընդհակառակը աւելի սաստկացնում է այդ վտանգը, քանի որ մի ամենալուրջ պատճառով անգամ երեք պետութիւնների դաջնակցութիւնը ձեռնոց կարող է չարտել հակառակորդի վրա, և քանի որ հակառակորդն էլ այդ բոլոր ի նկատի ունենալով, ստիպված է ինքն զինաւորվել և պատրաստութիւններ տեսնել. և հաւ հենց այդ պատճառով ռուսաց կառավարութիւնը սկսել է նախապատրաստութիւններ տեսնել արեւմտեան սահմաններում: Ռուսաց կառավարութիւնն այդ վարմունքը մեծ ազդու է հանել արտասահմանում, և «Русский Инвалид» լրագրի նշանաւոր յօդուածը եւրօպական մամուլի մէջ առաջ բերեց ամեն տեսակ բացատրութիւններ և նկատողութիւններ:

Գուցէ, ճշմարիտ, այս բոլոր երեւոյթները այնքան էլ ծանր հետեանքներ չունենան, ինչպէս երևում է առ այժմ. հենց նոյն իսկ այն ճշմարտութեան հիման վրա թէ vis pacem, para bellum, բայց չէ կարելի մոռանալ և այն, որ պատերազմական այդպիսի պատրաստութիւններ չեն կարող շատ անգամ առանց վտանգի անցնել. այնքան տնտեսական ծանրութիւններ կրելով, եւրօպական պետութիւններից շատերը գուցէ հարկաւոր կը համարեն միանգամից վերջացնել իրանց քաղաքական հաշիւները: Իսկ որ այդ քաղաքական հաշիւները կան եւրօպական պետութիւններից շատերի մէջ, — անկասկածելի է և դրա մասին խօսելն անգամ աւելորդ է: Այդպիսի անընդհատ սպառազինութիւնները, ինչպէս նկատել է մարկիզ Սալլերբի պահպանողական ժողովում խօսեցած իր մի ճառի մէջ, ինքն ըստ ինքեան երկիւղի աղբիւր են դառնում, և ստիպում են այսօր դէնքով անել այն, ինչ որ պէտք է տեղի ունենար անորոշ ապագայում, այն էլ դուցէ ոչ թէ զինել, այլ ընդհանուր հաշտութեան միջոցով:

«KOELNISCHE ZEITUNG» ԼՐԱԳԻՒՅՈՒՈՒՄԵՐ Գերմանական «Koelnische Zeitung» լրագիրը, ինչպէս մեզ հեռագրում է Կեռնից, զեկտեմբերի 9-ից, «Հիւսիսային գործակալութիւնը», «Русский Инвалид» լրագրի յայտնի յօդուածի առիթով տպել է իր զինուորական աշխատակցի մի յօդուածը, որը հետեւալ ընդդիմախօսութիւնն է անում. «Ռուսաստանի սահմանի վրա գերմանական զօրքերի շատացնելը տեղի է ունեցել ոչ թէ վերջին հինգ տարվա ընթացքում, այլ միայն 1887 թւի զարնանը: Զօրքի թիւ շատացնելու պատճառը Ֆրանսիայի հակապական զինաւորութիւնն էր, որի պատճառով Գերմանիան ստիպվեցաւ պահել կայսերական նահանգներում այն զօրքի մի մասը, որը զետեղված էր սովորաբար արեւելեան նահանգներում: Երբ Ռուսաստանը իր զիստօր ոյժերը կենտրոնացրեց արեւմտեան սահմաններում, իսկ ռուսաց մամուլն էլ սկսեց խօսել Գերմանիայի մասին շատ թշնամաբար, այն ժամանակ Գերմանիան էլ ուղարկեց դէպի իր արեւելեան սահմանը, — որը մինչև այդ ժամանակ համարեա լուրջօրին անպաշտպան էր, — մի քանի էակաւորս և մի քանի բառալիւծ զօրք: «Русский Инвалид» լրագրի խօսքերով, Գերմանիան իր արեւելեան կողմերում չինել է 4,850 կիլոմետր երկաթուղու դիմ, բայց Պրուսիայում, Պոլանդի և Սիլեզիայի նահանգներում ալգոլիսի երկաթուղեան երկաթուղու դիմ համար մինչև անգամ տեղ չը կայ: Բացի դրանից, ինչ կը նշանակի թէ 11 երկաթուղի կարող են դրք բերել դէպի ռուսաց սահմանը: Գայտնի է այն վաւորը, որ ոչ մի տեղ գերմանական երկաթուղիների ճիւղերը ռադիալիտական նպատակներով չեն սկսված և չեն շինված. արեւելեան սահմաններում բոլոր երկաթուղու դիմերը շինված են առաւորական նպատակով, զիստօրային ցանկանալով միանշնդ Ռուսաստանը: Բալտեան ծովի գերմանական նաւահանգիստների հետ: Գրանից յետոյ «Русский Инвалид» լրագիրը ասում է, որ Գերմանիան չինել է առաջնահարկ արդիւնքներ, — Տօրն, Պոլանդի և Կենդիւրբերգ, և նոյնը անում է այժմ Գրաուզենցի վերաբերութեամբ. բայց չէ որ այդ արդիւնքները վաղուց արդէն զօրութիւն ունեն. իսկ ինչ վերաբերում է Գրաուզենցը՝ արդեւ ըստիկ զարմնեւում, այդ մասին պրուսական զինուորական վարչութեան մէջ ոչ ոք չէ ոչինչ յայտնի չէ: Ապա նոյն լրագիրը հերքում է «Русский Инвалид» լրագրի հաղորդածը՝ Աւստրիայի երկաթայական սպառազինութեան մասին և մատնանիշ է անում Ռուսաստանի զինուորական պատրաստականութեան վրա: «Հաղել թէ մենք կը սկսվենք, ասում է «Köln. Zeitung» լրագիրը, եթէ սկսենք այդ զինուորական պատրաստութեան նպատակը արեւմտեան օրոնքի: «Русский Инвалид»-ը աշխատում է վերջացնել Ռուսաստանի զինուորական պատրաստութեան նշանակութիւնը: 1887 թւի աշնանը զէնքի հրաւիրվեցան անորոշ ժամանակով արձակվածները. նրանից յետոյ արդեւ նրանք արձակվեցան: Ինչ կը նշանակի հեծեկազմի զինքի մեծացնելը իւրաքանչիւր երկու զօրաբանով: Ինչ նշանակութիւն ունի պատերազմական զօրութեան մէջ զեն հեծեկազմի մի քանի մասերը: Ռուսաց երկաթուղիները ծառայում են միմիայն պատերազմական նպատակներին, իսկ ինչ վերաբերում է արդիւնքներ չինելուն, այդ բանում Ռուսաստանից առաջ է անցել միմիայն Ֆրանսիան»:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Վիեննայից հեռագրում են, որ Գալիցիայում պատերազմական պատրաստութիւններ են տեսնվում: Այդ լուրը առհասարակ ամեն տեղ ահազին աղմուկ է բարձրացրել:

—«Standard» լրագիրը տեղեկութիւն է ստացել, որ երեք պետութիւնների մեծ դաջնակցութիւնը վճուել է անմիջական օդուութիւն հասցնել, եթէ այդ դաջնակցութեան պատկանող պետութիւնները մէկը վրա յարձակում կը լինի: Նոյն օդուութիւնը պէտք է անել և այն դէպքում, երբ նրանից մէկը ստիպված կը լինի յարձակում գործել մի որ և իցէ այնպիսի պետութեան վրա, որը դաջնակցութեան չէ պատկանում:

—Վիլնի տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ Գերմանական թաղամասնային հիւանդութիւնը աւելի ծանր կերպարանք է ստացել:

—Բայաջական վերջին վերադարձնալու տու-

թով՝ փարիզից հեռագրում են, որ այդ փոխառութեան գործը անաշուղ վերջացաւ:

—«Temps» լրագիրը տեղեկութիւն է ստացել Սօֆիայից, որ բօլգարական կառավարութիւնը մտադիր է պահանջել աղգային ժողովից՝ փոխառութիւն անել պատերազմական ծախսերի համար: Կառավարութիւնը իր այդ պահանջը պատճառաբանում է նրանով, որ բոլոր պետութիւնները զինաւորվում են:

—Վ. Պօլսից գրում են, որ Տրիպոլիսի սահմանի վերաբերութեամբ Ֆրանսիայի և Թիւրքիայի մէջ ոչինչ համաձայնութիւն չէ կայացրել:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆՍՏԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

ԲԵՐԼԻՆ, 10 զեկտեմբերի: Այսօր բօրայում լուր տարածվեց, որ իբր թէ Կօրուրդի պրինցը դահից հրաժարվեցաւ, սակայն այդ լուրը հիմք չունի. այսօր ամենայնիւ վիշնայում Կօրուրդի պրինցի դուքիւնը անհաստատ են համարում: Նոյնպէս և վիշնայի բօրայում այսօր լուր տարածվեց Կօրուրդի պրինցի դահից հրաժարվելու մասին:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 10 զեկտեմբերի: Ամուսնական նաւատորմի ծառայողների շատաւ հաստատված է մի տարով, և կը սկսի զօրծել երբ պետական խորհուրդը կը վճուի առ հարկաւոր գումարը: —Լուրերին նայելով, պետական խորհուրդը հաւանութիւն է տուել կերտելի վրա զրկող ակցիզին, և ոչ թէ նախկին:

ԲԵՐԼԻՆ, 10 զեկտեմբերի: Սկուպչիկան հաւանութիւն տուեց Բայաջայի հետ կապվող երկաթուղային դաջնադրին, Ռիստիչ յայտնեց, որ այդ դաջնադրը կապված է Բայաջայի իսկական կառավարութեան հետ, և որ Սերբիան հետեւում է այն ծրագրին, որի նպատակն է բարեկամական յարաբերութիւններ պահպանել բոլոր պետութիւնների հետ:

ԲԵՐԼԻՆ, 10 զեկտեմբերի: «National Zeitung»-ի Սօֆիայից ստացած տեղեկութիւններն նայելով, պրինց Ֆերդինանդ ինքնակամ կերպով դուրս չի դնոյ Բայաջայից, եթէ մինչև անգամ Բայաջայում նրա մնալը մի ակնյայտի վտանգ լինի խաղաղութեան համար: «Ռուսին պէտք է դուրս քշել նրան, ասում է «National Zeitung»: Եթէ առաւորական լրագիրները կը հարցնեն, թէ ինչով յատկապէս կը փոխի իրերի դրութիւնը Կօրուրդի պրինցի հեռանալը, դրան կարելի է պատասխանել, որ Կօրուրդի պրինցի Բայաջայում մնալը երկրի մի նշանակութիւն ունի, որից բոլոր պետութիւնները, որոնք կազմում են խաղաղութեան իրան, պէտք է որքան կարելի է իրանց հեռու պահեն: Գրանից յետոյ լրագիրը յայտնում է, որ տիրապետող աղգեցութեան ներկայացուցիչ պետութիւնները, ի պատիւ եւրօպական իրաւունքի, պէտք է ամենից առաջ հանդէս դան, քանի որ այդ միայն կարող է կրկնապատկել Եւրօպայի դէպի խաղաղութիւնը ունեցած հաւատը: Գաւայի է տեսնել, որ Կօրուրդի պրինցը ներմուծված է Աւստրո-Ունգարիայում, թէ և ոչ աւստրո-ունգարական կառավարութեան ձեռքով: Որքան որ ծանր կարող են լինել այժմեան դրութեան հետեանքները, այնքան էլ անհրաժեշտ են դրա բացատրութիւնները:

ՎԻՆՆԱ, 10 զեկտեմբերի: «Neue Freie Presse» հաղորդում է, որ Միլան թաղաւորը, անցեալ կիրակի օր ընդունելով սկուպչիկայի պատգամաւորութիւնը, որը եկել էր շնորհաւորելու նրան Սերբիայի «Պանդօն» տօնի առիթով, յայտնեց իր զօհունակութիւնը սերբիական աղգային զաջմուծներին արտայայտելու պատճառով. «Եւրօպայի համար այժմեան վտանգաւոր ժամանակ, ասեց թաղաւորը, կրկնապատիկ օգտակար է հանդէս բերել աղգայնութիւնը: Եթէ բանը պէտք է համար այնտեղ, որ սլաւօնական իդէան կը սկսի կուռել գերմանականի հետ, այն ժամանակ սերբերը չը պէտք է մասնակցեն դրա մէջ, այլ պէտք է բաւականաչափ հաշտեցնող դերով: Որքանօվիշները ապրել են միմիայն սերբիական իդէայի համար, և ես ցանկանում եմ հետեւել մեր տան այդ աւանդական ուղղութեանը: Ահա իմ ուրախութիւնը քաղաքապետութեան զալտնիքը»:

ՀԱՅՈՒԵԿՁԻՌ

Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի Ա Ռ Ե Ի Տ Ի Ր Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ա Յ Ի

91-ն Դեկտեմբերի 1887

Պ Ա Հ Ա Ն Զ Ք	Թիֆլիսում	Բազուայ բաժն.	Ընդամենը	Պ Ա Ր Տ Ք	Թիֆլիսում	Բազուայ բաժն.	Ընդամենը
1. Դրամարկի (առձեռն թղթադրամ).....	62,111—89	16,901—34	79,013—23	1. Հիմնական դրամադրուխ.....	1,000,000 —	— —	1,000,000 —
2. Ընթացիկ հաշիվ Պետական Բանկի բաժնուհ.	789—46	200,000 —	200,789—46	2. Պահեստի դրամադրուխ.....	148,563—31	— —	148,563—31
3. Առանց Մոսկվայի զեղչման բանկայում.....	150,000 —	— —	150,000 —	3. Արդիվը 1885 թ. ի պահեստ... ..	129,491—17	— —	129,491—17
4. Զեղչումն (Disconto) մուրհակաց երկու ստո- րագրություններ.....	2,112,131—23	555,005—46	2,667,136—69	4. Դրամական առանձններ՝ ա) Պայմանագրամով.....	1,615,676 —	80,890 —	1,696,566 —
5. Զեղչումն տոկոսաբեր թղթերի, կարծեսների և այլն.....	29,036—70	6,535—09	35,571—79	բ) Պահանջ.....	233,838 —	40,350 —	274,188 —
6. Փոխադրությունները հրապարակումով՝ ա) Պետականից ապահ. տոկոսաբ. թղթերի. բ) » » » » » գ) ապրանքների.....	761,323—37 135,189 — — —	208,080 — 10,800 — 500 —	969,403—37 145,989 — 500 —	դ) Ընթացիկ հաշիվում հառարակ.....	661,652—68	360,395—61	1,022,048—29
7. Բանկայի պատկանեալ տոկոսաբեր թղթեր. 8. Ոսկի և արծաթաձևների փոխանակադրեր.....	397,641—55 23,725—49	9,295—18 26,003 —	406,936—73 49,723—49	» » » » » » » » » » » » » » »	— — — — — —	169,146—06	169,146—06
9. Թղթակցներ՝ ա) Նոյա հաշիվը (Loro).....	4,178,883—66	— —	4,178,883—66	5. Մասնաւոր ընթացիկ հաշիվ պետական բանկայի Թիֆլիսի բաժնում, առանձնաժամ մուրհակներով և տոկոսաբեր թղթերով և փոխառումն զեղչեալ մուրհակներով.....	376,110 31	— —	376,110 31
բ) Բանկայի հաշիվը (Nostro).....	5,697,896—98	— —	5,697,896—98	6. Թղթակցներ՝ ա) Նոյա հաշիվը (Loro).....	4,011,011—58	— —	4,011,011—58
10. Բաժնի հաշիվը կենտրոն. վարչության հետ. կենտրոն. վարչության հաշիվը բաժնի հետ.	715,339—13 — —	— — 390,611—01	715,339—13 390,611—01	բ) Բանկայի հաշիվը (Nostro).....	5,915,626—62	— —	5,915,626—62
11. Բողոքուած մուրհակներ *).	383,889—60	— —	383,889—60	7. Բաժնի հաշիվը կենտրոն. վարչության հետ. կենտրոն. վարչության հաշիվը բաժնի հետ..	390,701—01	719,624—41	719,624—41
12. Պայմանագրամը անցուցուած փոխադրությու- ններ.....	16,395 —	1,400 —	17,795 —	8. Բանկայի բաժնեկտոմսերու անվճար կտրոն- ների բաշիվը 1882, 1883, 1884 և 1886 թ.	1,905—40	— —	1,905—40
13. Ընթացիկ ծախսեր.....	38,039—42	11,847—81	49,887—23	9. Չը վճարուած տոկոսներ, առանձնեղու- թեանցիկ հաշիվներու և այլ գործողու- թեանց.....	64,753—20	15,706—31	80,459—51
14. Կահարասիք և սկզբնական ծախսեր.....	3,701—68	3,582—76	7,284—44	10. Ստացուած տոկոսներ և յանձնարարա- կաններ.....	133,470—54	52,771—57	186,242—11
15. Յետ ստացուելիք ծախսեր.....	13,051—86	527—49	13,579—35	11. Փոխանցիկ գումարներ.....	36,346—20	4,005—18	40,351—38
Բ. Ա.	14,719,146—02	1,442,889—14	16,162,035—16	Բ. Ա.	14,719,146—02	1,442,889—14	16,162,035—16

*). Բողոքուած մուրհակներից վճարները, որոնք կարող են տեղի ունենալ, ծած-
կելու համար յատկացրած է առանձին գումար..... 129,491 Բ. 17 Կ.

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՎԱԳԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.
Զորեշարժի, ղեկավարների 23-ին, ԱՐՄԵՆԻԱ (ARMÉNIE) շոգենաւոր, նաւա-
պետ ՇԵՈՒՏ (SCHEULT) գուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն,
Կ. Պոլիս և Մարսէլը: Տեղեկութիւնների մասին պէտք է ղիմել ընկերութեան
գործակալներին: Բաթումում պ. Կարանիօնին և Թիֆլիսում պ. Բէնօնին, նախկին Արժ-
րունի զարկերէում, № 103.
2—4

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՎԱԳԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
(ՄԵՍԱՃԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ
Ուրբաթ, 18 դեկտեմբերի, ԲԱԹՈՒՄԻՅ շոգենաւոր LE DONNAI
(ԼԵ ԴՈՆՆԵ) նաւապետ BERNARD (ԲԵՐՆԱՐ) մանելով Կ. Պոլիս, Զմիւռնիա և
Սիրա:
Ազնանները՝ ԲԱԹՈՒՄԻՄ պ. Գ. ԷՍԵՆՃԵՐ, իսկ ԹԻՖԼԻՍԻՄ ԳԵՌԳ. ՀԵՋՈՒԲԵԱՆ
ՀԵՋՈՒԲԵԱՆՑ:
2—3

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ Հոգաբարձական խոր-
հրդարանում, ղեկավարներ ամսի 23-ին, երեկոյան 8 ժամին, լինելու է երկրորդ
անգամ աձուրդ, կապալով տարւո Ներսիսեան Հին զարոյի ներքնայարդի կրպակները:
Պայմանաթուղթը կարելի է կարգալ Հոգաբարձութեան ղեւանատան մէջ ամէն օր,
բացի կիրակի և տօն օրերից, առաւօտան 10 ժամից մինչև 12 ժամը:
Հոգաբարձու՝ Մ. Թամաշեան
Գործալար՝ Բ. Հ. Զալախան
3—3

EXPORTATION-IMPORTATION
CONSTANTIN P. CHÉHIA NTZ
MILAN (ITALIE)

Կանստանտին Պ. ՇԵՆԱՆՑԻ աւետարական գրասենեակը լինելով ՄԻԱՆ, և ունենա-
լով ուղղակի յարաբերութիւններ խաղիայի, Շվեյցարիայի և Ֆրանսիայի ֆարքիկանե-
րի հետ, կընդունի յանձնարարութեամբ ապրանքներ ծախելու համար հեռեկանները՝
մետաքս, բոժոժ, մետաքսի և բոժոժի մնացորդը, բուրդ, բամբակ, ցորենեղէն, նաւթ և
ընդհանրապէս իւրեք տեսակի ապրանքները, որոնք ծախվում են Եւրո-
պայում: Յանձնարարութեամբ կընդունի դարձեալ առնել Եւրոպայի ամէն տեսակի ապ-
րանքներ Կովկասի համար: Ամբողջ ապրանքները ստանալուց աժան և ձեռնառու պայ-
մաններով փող կը տայ ի հաշիւ: մանրամասն տեղեկութեանց համար գրել այս հաս-
ցեով: Monsieur Constantin P. Chéhiantz, № 18, Via Lauro, Milan, (Italie
MILAN (Italia).

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ

«ԹԻՖԼԻՍ» ՀԱՅՈՒՆ ԿԻՐԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՂԵՒՈՆԴԵԱՅ ՄԵԾԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՀԱՅՈՑ

Գինն է 1 Բ.—50 կոպ: վաճառվում է կենտրոնական գրադաճառանոցում:

2—3

ԲԱՅՎԱՄ Է ԱՌԱՋԻՎԱՅ 1888 ԹՈՒԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԿԱԳՈՒԹԻՒՆԸ

„ԱՂԲԻՒՐ“

Մ Ի Ա Մ Ս Ե Ա Ց Պ Ա Տ Կ Ե Բ Ա Ջ Ա Ր Դ Հ Ա Ն Դ Է Ս

ԵՐԵՎԱՆԵՐԻ ԵՒ ԴԱՍՏԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(Վեցերորդ տարի)

Առաջինը 1888 թ. դիտաւորութիւն կայ խիստ ընդարձակել «ԱՂԲԻՒՐ» Բ. բաժնը, իսկ ա.
բաժնը պիտի աշխատեն, պահպանելով ամսագրի բուն նպատակն ու ուղղութիւնը, դարձնել մի
պատկերազարդ հանդէս փոխարինող շքեղ հրատարակութիւն:

«ԱՂԲԻՒՐ» 1888 թ. I պրէմիան՝ ՅԱՍՈՒՍԻ ՄՆՈՒՆԻԸ ԵՒ ՄՈՂԵՐԻ ԵՐԱՊԱԳՈՒԹԻՒՆԸ ԷՖԻԿ-
տօի օլէօգրաֆիա, արդէն թէ Թիֆլիսում և թէ գաւառներում մի-մի օրինակ կան ի ցոյց բաժա-
նորդներին Այս պատկերը կարող է ամենաշքեղ հիւրանենակները դարձնող պատկերներից մէկը
լինել 1888 «ԱՂԲԻՒՐ» բաժանորդ գրվող հէն իսկոյն կըստանայ այդ արէմիան բաժանորդ զը-
վելուն պէս:

«ԱՂԲԻՒՐ» 1888 թ. II պրէմիան՝ մեր տաղանդաւոր նկարիչ Գ. Բաշինջաղեանի յայտնի
«ԱՂԲԱՄԱՐԱՑ ԾՈՎԱԿԸ» վիճակ կը գցվի «Աղբիւր» բաժանորդների մէջ սեպտեմբեր ամսին, ներ-
կայութեամբ Թիֆլիսում գտնուող բաժանորդների և հետաքրքրվողների: «Աղբիւր»-ը տա-
նող բաժանորդը, եթէ կամենայ կարող է այն թողնել խմբագրութեան և ստանալ 100 րուբլի:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ: Մասն առաջին. 1) Վէպեր, մանրամասն պատմ. գործեր, առակներ, հեքիաթ-
ներ, ճանապարհորդութիւններ, կենսագրութիւններ: 2) Բանաստեղծութիւններ: 3) Գիտութիւն և
արուեստ: 4) Հետաքրքր տեղեկութիւններ: 5) Այլ և այլ: 2 ու ռ ա լ ի ջ: 6) Մանկական, ֆրէ-
զեան, չափամոտի և այլ խաղեր: Բնութան, թաքնական խնդիրներ: Անեկդոտներ, հանելուկներ,
շուտանկարներ: 7) Երգեր՝ ձայնադրած (նոտաներով): Մասն երկրորդ. 8) Կրթութեան և դաստիա-
րակութեան վերաբերեալ յօդուածներ և տեղեկութիւններ: 9) Առաջարկութիւններ, խորհուրդներ:
10) Մատենախօսութիւն և նոր գրքեր: 11) Խառն լուրեր: 12) Պատասխաններ, յայտարարութիւն-
ներ:

«ԱՂԲԻՒՐ» տարեկան բաժանորդագինը 3 Բ. է, պրէմիաների ծրարի համար պէտք է ուղար-
կել 3 հատ 7 Կ. մարկաներ: Ապառիկ ոչ քիչ ընդունվում:

Հասցեն՝ Тифлисъ, Редакция „Агбуръ“ իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédac-
tion du journal „Agbur“.

3—3 Խմբագիր-Հրատարակիչ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ

Արդէն ծախվում են կատարելագործված, սպիտակ բոյով, անվտանգ

ՇՎԷԴԱԿԱՆ ԼՈՒՑԿԻՆԵՐԸ

Ա Մ Ե Ն Ա Է Ժ Ա Ն Գ Ն Ո Վ :

Մեծ քանակութեամբ առնողներին ՆՇԱՆԱՌՈՐ ԶԻՋՈՒՄՆ ԿԸ ԼԻՆԻ:

Գործարան Գ. Ա. ՏԵՐ-ԱՍՏԱՆՈՒԲԵԱՆԻ և ընկերութեան, Թիֆլիսում, ՎԵՐԱ Կոչված
Ժաղում:
7—50

Լ. Բ. ԻԻԳԻԿԵԼԻ

ԼՐԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ

(Գօլովինսկի պրոսպեկտի վրա, Ալեքսանդրեան այգու մօտ) ընդունում է ստորագրութիւն 1888
թ.ին հրատարակելի բոլոր պարբերական հրատարակութիւնների համար, խմբագրական գնե-
րով:
13—15